**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2**

**06.04.2023թ. կնքված N ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-23/18-1 ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի**

ք. Երևան «23» 05 2023թ.

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմն՝ ի դեմս աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար Դավիթ Առաքելյանի, ով գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Հպարտ Քաղաքացի» ՍՊԸ-ն՝ ի դեմս տնօրեն Արամ Ստեփանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով 06.04.2023թ. կնքված ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-23/18-1 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.8 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգել 15 օրացուցային օրով, ինչով պայմանավորված Պայմանագրի «ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N2-ում «մատակարարման ժամկետը» սյունակում «Առավելագույնը 22-րդ օրացուցային օրը համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում:» ձևակերպումը փոխարինել «Առավելագույնը 37-րդ օրացուցային օրը համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում:» ձևակերպմամբ:

1.2 Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված N 2-ը խմբագրել նոր բովանդակությամբ համաձայն Համաձայնագրի Հավելվածի N 1-ի:

## 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է էջից, հայերեն՝ կնքված երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի Հավելված N 1-ը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ ԱԺ աշխատակազմ | Հպարտ Քաղաքացի ՍՊԸ |
| ք. Երևան, Բաղրամյան պող.19 | ք. Երևան, Արաբկիր 19փ. 4շ. 5բն |
| ՀՎՀՀ 00008519 | ՀՎՀՀ 00180633 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | Կենվերս Բանկ ՓԲԸ |
| Հ/Հ 900011020147 | Հ/Հ 19300462879100 |
| ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար Դավիթ Առաքելյան | |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 1
«06» ապրիլի 2023թ. կնքված
ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-23/18-1 ծածկագրով պայմանագրի
« 23 » « 05 » 2023 թ. կնքված Համաձայնագիր N2-ի

# ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Չափման միավորը | Միավոր գինը/ՀՀ դրամ | Ընդհանուր գինը/ՀՀ դրամ | Ընդհանուր քանակը | Մատակարարման | | |
| | | | | | Հասցեն | Ենթակա քանակը | Ժամկետը** |
| 1 | հատ | 347998.65 | 34799865.60 | 100 | ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19 | 100 | Առավելագույնը 37-րդ օրացուցային օրը համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: |

**ՎԱՃԱՌՈՂ**
**Հպարտ Քաղաքացի ՍՊԸ**
**ք. Երևան, Արաբկիր 19փ. 4շ. 5բն**
**ՀՎՀՀ 00180633**
**Կենվերս Բանկ ՓԲԸ**
**Հ/Հ 19300462879100**

(ստորագրություն)
Կ.Տ.

**Գ Ն Ո Ր Դ**
**ՀՀ ԱԺ աշխատակազմ**
**ք. Երևան, Բաղրամյան պող.19**
**ՀՎՀՀ 00008519**
**ՀՀ ՖՆ գործառնական վարչություն**
**Հ/Հ 900011020147**
**ՀՀ ԱԺ աշխատակազմի**
**ղեկավար-գլխավոր քարտուղար**
**Դավիթ Առաքելյան**

(ստորագրություն)
Կ.Տ.